ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Ղեկավար՝ Վերոնիկա Բաբաջանյան

Կատարող՝ Խոսրովուհի Գևորգյան

ԵՐԵՎԱՆ-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ. ՏԵՍԱԿՆԵՐԸ--6

1.1 Փոխադրության տեսակները և կազմակերպման խնդիրները----------6

1.2 Պատմելը որպես փոխադրություն հյուսելու կարողության ձևավորման նախապայման----------13

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ 18

2.1 Փոխադրություն գրելու քայլաշարն ըստ նրանց տեսակների----------18

2.2 Փոխադրության ստուգման չափանիշները----------27

2.3 Փոխադրություն գրելու կարողության ձևավորման մեր փորձից----------30

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ----------38

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------39

ՀԱՎԵԼՎԱԾ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Խոսքը հաղորդակցման և փոխըմբռնման կարևորագույն միջոց է, որի հիմքում ընկած է անհատի վերացարկված մտածողությունը: Խոսքային հաղորդակցման ընդհանրությունը միավորում է նույն լեզվով խոսող հանրության բոլոր անդամներին՝ ապահովելով նրանց գիտակցական փոխըմբռնման գործընթացը: Խոսքային հաղորդակցական կարողությունները ձևավորվում են տարրական դպրոցում, այդ հարցում կարևորվում է մայրենի լեզվի դերը: Տարրական դասարաններում մայրենի լեզվի ուսումնասիրման հիմնական նպատակներից են կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացումը, խոսքի ձևավորումը, հաղորդվելիք մտքին համարժեք բառեր ընտրելու, բանավոր և գրավոր կապակցված խոսք կառուցելու կարողության մշակումը: Աշակերտը պիտի կարողանա մտքերը հասկանալի, ճիշտ կառուցված նախադասություններով արտահայտել և հաղորդակցվել մարդկանց հետ: Մեր մանկավարժական գործունեության ընթացքում զգացել ենք, որ աշակերտները դժվարանում են իրենց մտքերն արտահայտելիս, և որ միայն բանավոր հարցումները բավարար չեն աշակերտների խոսքի լիակատար զարգացման համար: Ուստի մենք ընտրեցինք վերոնշյալ թեման՝ փորձաքննությամբ պարզելու, թե ինչ աշխատանքների շնորհիվ կարող ենք հասնել արդյունքի:

Աշակերտների խոսքի զարգացմանը մեծապես նպաստում են գրավոր աշխատանքները, մասնավորապես փոխադրությունը իր բոլոր տեսակներով՝ մանրամասն, համառոտ, ընտրովի, ստեղծագործաբար և այլն: Փոխադրության բնագրի ընկալումն իրականացվում է բացատրական ընթերցանության բոլոր բաղադրամասերի կիրառմամբ: Արդյունքում կարևորվում են հերոսների այն արարքները, որոնց շուրջ զարգանում են բնագրի դեպքերը, որոշվում են գլխավոր հերոսի արարքի դրդապատճառները, բնագրի տրամաբանությունն ու հիմնական գաղափարը, նկարագրվող դեպքերի պատճառահետևանքային կապերը: Փոխադրություն գրելուն մեծապես նպաստում է պատմելու տարբեր տեսակների կիրառումը՝ որպես նախապատրաստական աշխատանք:

Ժամանակակից կրթական հայեցակարգում կարևորվում է կրտսեր դպրոցականի մտածողության զարգացման խնդիրը: Ներկայումս տեղի ունեցող արագընթաց զարգացումներն իրենց ներգործությունն են ունենում կրթական համակարգերի վրա՝ առաջադրելով տեղեկատվական տեխնոլոգիաներով հարուստ պայմաններում գործող և ապրող մարդու ձևավորման նոր պահանջ: Եվ դա իր հերթին առաջ է բերում կրթության բովանդակության վերանայման և արդիականացման պահանջ:

Հետազոտության արդյունքում, ելնելով հանրակրթության հիմնական նպատակներից, նորովի է մեկնաբանվում փոխադրության արդիականացման հարցը, որոշակիացվում և հստակեցվում է մանկավարժական սկզբունքներին համապատասխան ընտրված ցիտելիքների այն համակարգը, որը հիմք է ծառայում սովորողների մտավոր կարողությունների զարգացման համար:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել կրտսեր դպրոցականների խոսքի զարգացման հնարավորությունները փոխադյտության միջոցով և ներկայացնել այդ ուղղությամբ մեթոդական երաշխավորություններ:

Հետազոտության խնդիրներն են.

- հիմնավորել փոխադրության կարևորությունը կրտսեր դպրոցականների կապակցված խոսք կառուցելու գործում,
- դիտարկել փոխադրության համար նախատեսված ստեղծագործությունների առանձնահատկությունները,
- հիմնավորել փոխադրություն գրելու կարողության ձևավորման գործընթացում պատմելու կիրառման և մեթոդական քայլաշարի ապահովման կարևորությունը,
- մշակել, փորձարկելն հիմնավորել կրտսեր դպրոցականների խոսքի զարգացմանը նպատող փոխադրության տեսակների կիրառման ձևերի մեթոդական համակարգը:

Ուսումնասիրությունների ընթացքում կիրառել ենք ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, համագործակցային, փոխներգործուն տարբեր մեթոդներ ու հնարներ:

Հետազոտության համար **մեթոդական հիմք են հանդիսացել** գրավոր աշխատանքների տեսակների, կապակցված խոսքի վերաբերյալ հետազոտություններն ու հայեցակարգային մոտեցումները:

Հետազոտության ուսումնասիրությունն ունի **տեսական** և **գործնական** նշանակություն:

Ուսումնասիրության տեսական նշանակությունը. տեսականորեն հիմնավորվել է փոխադրության գրելու կարողության ձևավորման մեթոդական քայլաշարը:

Հետազոտության գործնական նշանակությունը պայմանավորված է նյութի ուսուցման ժամանակ ժամանակակից մեթոդների կիրառմամբ, ուսուցմամբ նոր եղանակների ներդրմամբ: Փոխադրություն գրելու կարողության ձևավորման մեր կողմից մշակված մեթոդական ցուցումները կիրառել ենք մեր և մեր գործընկերների դասերի ժամանակ:

Մեր հետազոտական աշխատանքն իրականացրել ենք Երևանի թիվ 167 հիմական դպրոցում, որտեղ աշխատում ենք որպես դասվար:

Առաջին փուլում կատարել ենք նախապատրաստական աշխատանք, հավաքել և դասակարգել ենք թեմայի վերաբերյալ տեղեկատվական նյութեր, ուսումնասիրել ենք մեթոդամանկավարժական համապատասխան գրականություն:

Երկրորդ փուլում վերլուծել ենք առաջին փուլում հավաքած տեղեկատվական նյութերը, մշակել ենք նոր մոտեցումներ փոխադրություն գրելու կալաղության ձևավորման գործընթացն ավելի պարզ ու մատչելի կազմակերպելու համար: Կատարել ենք հայտորոշիչ աշխատանքներ 4-րդ դասարանում դիտարկելով աշակերտների գրած փոխադրությունների արդյունքները: Անց կացրել ենք նաև փորձարարական և ստուգողական աշխատանքներ, վերլուծել ենք արդյունքները:

Երրորդ փուլում համակարգել ենք մեր հետազոտական աշխատանքի արդյունքները, շարադրել ենք ավարտական աշխատանքը: Ուսումնասիրությունների ընթացքում համոզվեցինք, որ աշակերտներին՝ փոխադրություն գրելուն հանգամանորեն և տևական նախապատրաստելու դեպքում արդյունքները կարող են գոհացուցիչ լինել:

Մեր ավարտական աշխատանքը կազմված է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, գրականության ցանկից, հավելվածից և կազմում է համակարգչային շարվածքի 40 էջ:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ. ՏԵՍԱԿՆԵՐԸ

1.1Փոխադրության տեսակները և կազմակերպման խնդիրները

Խոսքային գործունեությունը բարդ երևույթ է. այն ունի լեզվաբանական, հոգեբանական, փիլիսոփայական և այլ տեսանկյուններ և դիտարկվում է համապատասխան գիտակարգերի կողմից: Խոսքն արտահայտվում է երկու ձևով՝ բանավոր և գրավոր: Բանավոր խոսքը պատմականորեն նախորդում է գրավորին, ունի խոսակցական-արտասանական իրացում:

Գրավոր խոսքը գրի առնված, գրավոր տեքստի վերածված խոսքն է. իրացվում է գրային պայմանական նշանների գործադրումով, ընկալվում է տեսողությամբ: Այս դեպքում խոսքային իրադրություն ստեղծվում է մտովի, ոչ իրականում: Գրավոր խոսքը զուրկ է բանավորին հատուկ հնչերանգային որոշ հատկանիշներից, սակայն այստեղ կարևոր դեր ունեն ուղղագրությունը, քերականական ձևերի ճիշտ կիրառությունը և կետադրությունը:

Գրավոր խոսքի ուսուցումն անբաժանելի կերպով կապված է բանավոր խոսքի, կարդալու և քերականության ուսուցման հետ: Գրավոր խոսքի զարգացմանը լեզվի ուսուցման գործում վերապահված է ամենամեծ դերը [14, 285]:

Գրավոր խոսքը սովորաբար նախապատրաստվում է բանավոր խոսքի միջոցով: «Երբ երեխան սկսում է խոսել, նա բանավոր խոսքի մարզանքներ է կատարում: Նրա ամբողջ շրջապատն օգնում է նրան, սովորեցնում տիրապետել բանավոր խոսքին: Բանավոր խոսքն արտահայտիչ է, պայմանականություն չունի, սակայն ձևական տրամաբանական տեսակետից ավելի պակասավոր է, քան գրավոր խոսքը» [9, 486]:

Բանավոր խոսքի համեմատությամբ թեև գրավոր խոսքը լինում է ավելի մշակված, ճշգրիտ, ավելի տրամանաբանական ու բովանդակալից և քերականորեն համակարգված, այնուամենայնիվ իր արտահայտչական հնարավորություններով զիջում է բանավոր խոսքին և հենվում է բանավոր խոսքի վրա:

«Աշակերտների բառապաշարի հարստացմանը մեծապես օգնում են գրավոր աշխատանքները՝ թելադրություններ, շարադրություններ, փոխադրություններ և նպատակային արտագրություններ: Աշակերտներին պիտի սովորեցնել գրավորի

ժամանակ որոնել, գտնել լեզվական համապատասխան ձևերը, իմանալ նրանց նմանություններն ու տարբերությունները, գործածության շրջանակները և գեղեցիկ ու պատշաճ ընտրություն կատարել, որպեսզի նրա խոսքը միօրինակ չստացվի, անտեղի կրկնություններից ու ավելորդ բառերից բարբառային և օտար ձևերից զերծ լինի [5, 84]:

Փոխադրությունը գրավոր աշխատանքի հիմնական տեսակներից է, որը, անշուշտ, նպաստում է գրավոր խոսքի զարգացմանը. բարելավում է աշակերտների գրագիտությունը, ամրապնդում ու հարստացնում է ակտիվ բառապաշարը, զարգացնում է ինքնուրույն մտածելու կարողությունը և ձևավորում է կապակցված խոսք կառուցելու կարողություններ:

Փոխադրություն գրելու գործընթացը կազմակերպելիս պետք է ուշադրություն դարձնել, որ աշակերտներն ունկնդրած նյութի բովանդակությունը փոխադրեն ինքնուրույն խոսքով, ինչպես նաև պետք է պահանջել, որ նրանք գործածեն նաև բնագրի որոշ բառեր ու արտահայտություններ՝ պահպանելով հեղինակի լեզուն ու ոճը: Փոխադրությունը չպետք է դառնա ունկնդրածի մեխանիկական վերարտադրություն, այն պետք է նպաստի երեխաների ստեղծագործական միտքը և վերլուծական մտածողությունը զարգացնելուն, աշակերտը պետք է հասկանա ընտրված նյութի գաղափարը՝ հիմնական միտքը, կռահի ենթատեքստը, զգա դեպքերի տրամաբանական կապերը և վերարտադրի «իր բառերով»:

Փոխադրությունը զարգացնում է աշակերտի տրամաբանական մտածողությունը, այն օգնում է աշակերտին սովորել ճիշտ մտածել, իր մտքերը ճիշտ ձևակերպել և արտահայտել, միևնույն մտքին լեզվական տարբեր ձևեր տալ, պահպանել մտքերի հաջորդականությունն ու կապը, բովանդակության մեջ տարբերել հիմնական և երկրորդական կողմերը: Փոխադրությունը զարգացնում է նաև աշակերտների դիտողականությունը, ընդարձակում ճանաչողականության շրջանակը, նպաստում ինքնուրույնության զարգացմանը, որը երևում է, երբ աշակերտը փորձում է փոխադրության միտքը իր բառերով ու լեզվամտածողությամբ արտահայտել:

Կրտսեր դպրոցում փոխադրություն գրելու կարողության ձևավորումը հետապնդում է մի շարք կարևոր նպատակներ [18, 451]:

- Փոխադրության հիմնական նպատակը երեխաների խոսքի և ստեղծագործական ունակությունների զարգացումն է: Աշակերտները փոխադրություններ սկսում են գրել՝ պարզագույն թեմաներից աստիճանաբար անցում կատարելով առավել բարդ թեմաների:
- Փոխադրությունը գրելը նյութի բովանդակությունը ճիշտ փոխադրելուն զուգընթաց նաև ուղղագրական, քերականական ու կետադրական կանոնները ամրապնդելու և երեխաների մեջ դրանց օգտագործման գործնական կարողություններ մշակելու նպատակ է հետապնդում:
- Փոխադրությունները զարգացնում են աշակերտի երևակայությունը, նրա մեջ ձևավորում են լեզվառճական աշխատանք ու բառերի ընտրություն կատարելու, առաջադրված միտքը այլ կերպ ձևակերպելու, տրված բառերով ու բառակապակցություններով նախադասություններ կազմելու կարողություն: Փոխադրությունը նաև կրթադաստիարակչական նշանակություն ունի. այն մեծապես նպաստում է աշակերտի անհատականության զարգացմանը: Դա դրսևորվում է ինչպես նյութի նկատմամբ նրա ցուցաբերած ինքնուրույն վերաբերմունքի, այնպես էլ փոխադրության լեզվի ու ոճի մեջ: Փոխադրությունը աշակերտի մեջ մշակում է խոսքի կուլտուրա, ձևավորում է նրա լեզուն ու ոճը, իսկ դա լեզվի ուսուցման հիմնական խնդիրներից մեկն է:
- Փոխադրություն գրելը բարձրացնում է սովորողի ակտիվությունը, նրա մեջ մշակում է վերլուծություններ ու համադրություններ կատարելու կարողություն, սովորեցնում է տարբերել էականը երկրորդականից: Փոխադրություն գրելիս աշակերտը սովորում է թեմաների, բառերի, արտահայտությունների, նախադասությունների ու ոճերի մեջ ընտրություն կատարել, մտքերը համակարգել, տրամաբանական կապն ու հաջորդականությունը ճիշտ պահպանել, որը չափազանց կարևոր նշանակություն ունի նրա խոսքի ու տրամաբանական մտածողության զարգացման համար:

Աշխատանքը նպատակային ու արդյունավետ դարձնելու տեսակետից կարևոր նշանակություն ունի փոխադրության ընտրությունը: Փոխադրության համար ընտրված նյութը աշակերտներին մեծ մասամբ պետք է ծանոթ լինի, համապատասխանի անցած ուղղագրական, քերականական ու կետադրական

կանոններին, նպաստի դրանց ամրապնդմանն ու գործնական կարողությունների վերածմանը:

Փոխադրություն գրելու կարողությունը մարդու գրագետ լինելու չափանիշներից է, որովհետև կյանքում մարդ ավելի շատ առիթ է ունենում փոխադրություն գրելու, քան արտագրելու, ուստի այդ կարողությունը դեռևս տարրական դասարաններից պետք է զարգացնել:

Փոխադրության մեջ աշակերտի անհատականությունը կամ ինքնուրույնությունը տարբեր դասարաններում տարբեր ձևով կարող է արտահայտվել: Մի դեպքում այն կարող է սահմանափակվել լեզվական հարցերով միայն, մյուս դեպքում դրսևորվել այս կամ այն դեպքի գործող անձի նկատմամբ աշակերտի յուրահատուկ վերաբերմունքով, երբեմն էլ միևնույն առարկայի, երևույթի կամ նկարի ուրույն ընկալման ու վերարտադրման ձևով և այլն:

Գրավոր խոսքի զարգացման գործընթացի բովանդակությանն ու մեթոդներին ներկայացվում են սովորողների տարիքային առանձնահատկություններով ու հնարավորություններով պայմանավորված որոշակի պահանջներ: Դրանք մասնավորապես բխում են հոգեկան այն գործընթացներից, որոնք ուսուցման ժամանակ ակնառու դեր ունեն [20, 23]:

Փոխադրությունը զարգացնում է գրավոր ունակությունները, ստուգում է աշակերտի՝ բնագիրը վերարտադրելու կարողությունները: Երբ ուսուցիչը կարդում է բնագիրը, աշակերտը, կիրառելով իր լեզվական գիտելիքներն ու ինքնուրույն մտածելու ունակությունները, վերարտադրում է բնագիրը: Գրավոր աշխատանքի այս տեսակը գրագիտության զարգացման գործում մեծ դեր կարող է ունենալ, քանի որ ստուգվում է աշակերտների գիտելիքների համակարգը՝ բառերի ուղղագրություն, որոշակի բառապաշարի իմացություն, թեմայի ճիշտ ընկալում և մեկնաբանություն:

Գ. Էդիլյանն առանձնացնում է աշակերտների լեզվական գրագիտության երկու կողմ՝ արտաքին և ներքին: Արտաքին կողմը ուղղագրությունն ու վայելչագրությունն են, ներքին կողմը՝ բովանդակությունը: Բովանդակային կողմին են վերաբերում խոսքի ձևաբանական կառուցվածքը, շարահյուսությունը և շարադասությունը, մտքերի տրամաբանական հաջորդականությունը, ամբողջական հատվածների կապակցությունը և ամբողջ շարադրանքի կառուցվածքը [6, 241]:

Բոլոր տեսակի գրավոր աշխատանքների դեպքում, որոնք ընկած են աշակերտների գրագիտության և խոսքի զարգացման հիմքում, պետք է հաշվի առնել ուսուցման մատչելիության, զննականության, հաջորդայնության, պարզից դեպի բարդը, ծանոթից անծանոթը գնալու և անհատականության սկզբունքները:

Ցանկացած թեմայով տրված փոխադրություն կարող է ունենալ հետևյալ կառուցվածքը.

1. աշխատանքի նպատակի պարզաբանում,
2. շարադրանքի նախապատրաստում,
3. աշխատանքի կատարում
4. դադար,
5. նյութի ինքնաստուգում:

Փոխադրություն գրելիս պետք է պահպանել մանկավարժահոգեբանական մի քանի հիմնական պահանջներ:

ա) փոխադրության համար ընտրել այնպիսի բնագիր, որը կունենա ճանաչողական կամ դաստիարակչական արժեք և հետաքրքրություն կառաջացնի տվյալ դասարանի աշակերտների շրջանում,

բ) օգտագործել այնպիսի զննական պարագաներ և կիրառել այնպիսի մեթոդներ, որոնք կնպաստեն աշակերտների կողմից նյութը հեշտությամբ փոխադրելուն,

գ) դասի ընթացքը պլանավորել այնպես, որ փոխադրելու գործընթացը մատչելի լինի յուրաքանչյուր աշակերտի, որովհետև ցանկացած ուսուցանվող նյութի հանդեպ երեխայի դրսևորած հետաքրքրությունն առաջանում է տվյալ նյութը հասկանալու մակարդակից,

դ) անցկացնել նախապատրաստական զրույց ընտրված թեմայի գաղափարի և ենթատեքստի վերաբերյալ,

ե) աշակերտներին տրվող առաջադրանքները, հարցերն ու բացատրությունները ձևակերպել հակիրճ, հասկանալի բառերով և ոչ երկարաշունչ նախադասություններով:

Պրոֆեսոր Ջ. Գյուլամիրյանն առանձնացնում է փոխադրությունների հետևյալ տեսակները.

ա) բնագրին հարազատ կամ մանրամասն,

բ) համառոտ,

գ) ընտրովի,

դ) ստեղծագործաբար [3,295]։

Մինչ բուն տեսակներին անցնելը՝ նշենք, որ կա նաև բանավոր փոխադրություն, որը կիրարկվում է նախաայբբենական շրջանում, երբ սովորողները դեռևս գրաճանաչ չեն, սակայն թեմատիկ նկարների շուրջ բանավոր հյուսում են պատմություններ, որը նպաստում է աշակերտների հիշողության, խոսելու, պատմելու կարողությունների զարգացմանը, հարստացնում է բառապաշարը, խոսքը դարձնում է ավելի տպավորիչ և հուզական։

Բնագրին հարազատ կամ մանրամասն փոխադրությունը կիրառելի է տարրական դպրոցի 2-4-րդ դասարաններում՝ միայն այն տարբերությամբ, որ երկրորդ դասարանի համար ընտրվում են փոքր ծավալի բնագրեր, իսկ հաջորդ դասարաններում աստիճանաբար ընտրվում են բարդ բնագրեր՝ գործողությունների և հերոսների ավելի մեծ թվով։ Փոխադրության այս տեսակը գրելիս պետք է աշակերտները մանրամասն նկարագրեն բոլոր դեպքերը, հերոսներին, նրանց փոխհարաբերությունները, պահպանեն դեպքերի հաջորդականությունը, բացահայտեն պատճառահետևանքային կապերը, հիմնավորեն շարադրանքի ավարտը։ Պետք է կարևորել բնագրի վերաբերյալ պլանի ստեղծումը, որը սկզբնական շրջանում կիրականացվի ուսուցչի օգնությամբ, հետագայում՝ աշակերտների ակտիվ մասնակցությամբ, և աստիճանաբար նրանք կցուցաբերեն ինքնուրույնություն։

Համառոտ փոխադրություն գրելը համեմատաբար դժվար է, որովհետև համառոտ գրելու համար պետք է սովորողները կատարեն մտավոր ավելի բարդ գործողություններ. ներկայացնեն բնագրի գլխավոր միտքը, կարողանան առանձնացնել գլխավորը երկրորդականից, խուսափեն մանրամասները գրելուց, տարբեր տարրեր միվորելով ընդհանրացնեն բովանդակությունը, սակայն երբեք պատահական տեղից բացթողումներ չկատարեն։ Առկա դժվարությունները հաշվի առնելով՝ համառոտ փոխադրություն անցկացվում է չորրորդ դասարանում։

Ընտրովի փոխադրություն ուսուցանելու մեթոդիկան նման է նախորդներին, սակայն այստեղ վերարտադրվում է միայն բնագրի մեկ հատվածը, որի ընտրությունը ավելի նպատակահարմար է՝ կատարի աշակերտը, իհարկե, եթե ուսուցիչը հատուկ նպատակ չի հետապնդում։ Ընտրովի փոխադրություն գրելու նպատակը ոչ միայն

ընտրված հատվածի բովանդակությունը մանրամասն փոխադրելն է, այլև ստեղծագործաբար և դատողություններ կատարելով։ Փոխադրության այս տեսակը նույնպես կիրառվում է չորրորդ դասարանում։ Ընտրովի փոխադրություն գրելուն նախապատրաստելիս պետք է կատարել ոչ միայն ամբողջական բնագրի, այլև յուրաքանչյուր հատվածի վերլուծություն և բառային կազմի քննարկում։

Ստեղծագործական փոխադրությունն իրականացվում է բնագրի բովանդակությունը ստեղծագործաբար վերարտադրելով. շարադրանքը կատարել գործող անձերից մեկի անունից, պատմողի դեմքի փոփոխմամբ կամ ականատեսի տեսանկյունից։ Փոխադրության այս տեսակը նպաստում է սովորողների երևակայության շնորհիվ բնագրի սահմանների ընդարձակմանը, նրանց ստեղծագործական կարողությունների զարգացմանը։ Ստեղծագործական փոխադրություն անցկացնելիս պետք է խուսափել պլան առաջարկելուց, որպեսզի յուրաքանչյուր աշակերտ յուրովի ստեղծագործելու և մտքերն ինքնատիպ շարադրելու հնարավորություն ունենա։

Կարելի է առանձնացնել ստեղծագործական փոխադրության մի քանի տեսակներ։ **Անավարտ կամ ինքնուրույն հանգուցալուծումով** փոխադրություն, երբ բնագրի սկզբնամասը կա, սովորողները, դեպքերի ընթացքը նկատի ունենալով, պետք է բնագրին տան համապատասխան վերջաբան։ **Ստեղծագործական հավելումներով** փոխադրություն. այստեղ բաց է թողնված բնագրի սկզբնամասը կամ որևէ հատված, աշակերտները, դարձյալ հաշվի առնելով բնագրի առկա մասի բովանդակությունը, պետք է լրացնեն բաց թողնված հատվածը կամ բնագրին ընտրեն համապատասխան սկիզբ։

Ստեղծագործական փոխադրությունները նպաստում են աշակերտների կողմից շարադրություն հյուսելուն և ընդհանրապես նրանց ինքնուրույն մտածողության զարգացմանը։

1.2 Պատմելը որպես փոխադրություն հյուսելու կարողության ձևավորման նախապայման

Փոխադրությունները խոսքի զարգացման միջոց են: Գրավորի այս տեսակը (նախ բանավոր պատմելով, ապա նույնը գրավոր շարադրելով) հարստացնում է աշակերտի խոսքը: Նա միաժամանակ դրսևորում է ակտիվություն: Որպեսզի փոխադրություն գրելու գործընթացը զարգացնի երեխայի խոսք կառուցելու և այն գրի առնելու կարողությունը և ոչ թե դառնա ունկնդրածի մեխանիկական վերարտադրություն, փոխադրության համար ընտրված նյութի գաղափարը աշակերտը պետք է հասկանա, զգա դեպքերի տրամաբանական կապերը և <<իր բառերով>> վերարտադրի ընկալածը [4, 295]:

Պատմելու ուղղությամբ աշխատանքներն սկսվում են դեռևս նախաայբբենական շրջանում, երբ թեմատիկ նկարների շուրջ հյուսում են պատմություններ՝ աստիճանաբար ներմուծելով խոսքի տարբեր տեսակների բաղադրիչներ (նկարագրություն, դատողություն, գնահատում), ապա յուրաքանչյուր հնչյուն- տառի ուսուցման հետ մեկտեղ աշակերտներին առաջադրվում է կարդալ փոքրիկ բնագրեր և վերարտադրել:

Փոխադրություն հյուսելու կարողության ձևավորումն սկսվում է բնագրի վերարտադրումից: Որքան էլ ունկնդրած նյութի բովանդակությունը փոխադրելիս կարևորվում է աշակերտի ինքնուրույն խոսքը, այնուամենայնիվ, պետք է աշխատանք տանել, որ նա որոշ բառեր ու բառակապակցություններ, մտքեր վերարտադրի՝ պահպանելով բնագրի հիմնական միտքը: Բնագրի շուրջ տարվող մեթոդական աշխատանքի միջոցով զարգանում է աշակերտի ինքնուրույն մտածելու ունակությունը, հարստանում է բառապաշարը: Փոխադրություն հյուսելու կարողության ձևավորմանը նպաստում է տարբեր ձևերով պատմելը, ինչպես նաև նախապատրաստվելը, որը դասը դարձնում է ավելի հետաքրքիր, բազմաբնույթ և նպաստում է աշակերտների խոսքի զարգացմանը: Աշակերտները կարդացածը կարող են պատմել մանրամասն: Մանրամասն պատմել սովորեցնելիս պետք է հասնել այն բանին, որ երեխաները կարողանան ճիշտ վերարտադրել դեպքերը, պահպանեն դեպքերի հաջորդականությունը, գործածեն հենակետային բառերն ու բառակապակցությունները:

Մանրամասն պատմելու համար պետք է արտահայտիչ կարդալ առաջադրված նյութը, որոշել բնագրի հիմնական միտքը, կարողանալ բաժանել տրամաբանական ամբողջություն ունեցող մասերի և վերնագրել: Պատմելիս պետք է կարևորել՝ արդյոք բովանդակությունը ամբողջությամբ պատմվեց, պահպանվե՞ց դեպքերի հաջորդականությունը: Օրինակ՝ հանձնարարում ենք աշակերտներին պատմել այբբենարանի 28-րդ էջի թեմատիկ նկարի բովանդակությունը , որը վերաբերում է քաղաքին: Առաջադրում ենք այնպիսի հարցեր, որ նրանք հեշտությամբ վերարտադրեն (ի՞նչ եք տեսնում նկարում, հեռվից ի՞նչ է երևում, ովքե՞ր են քայլում մայթերով, ի՞նչ է կախված փողոցում, ի՞նչ է անում նկարիչը և այլն): Աշակերտների ակտիվ մասնակցությամբ ներկայացվեց թեմատիկ նկարի բովանդակությունը: Մի խումբ աշակերտներ պատմեցին մանրամասն, իսկ 1-2 աշակերտ էլ՝ համառոտ:

Համառոտ պատմելու նպատակը բնագրի գլխավոր միտքը հակիրճ ներկայացնելու, գլխավորը երկրորդականից տարբերելու երեխաների ունակության ձևավորումն է: Համառոտ պատմելու կարողության ձևավորման համար պետք է նախապես մշակել հարցեր, որոնց միջոցով կկարողանանք աշակերտներին սովորեցնել գտնել ոչ միայն բնագրի գլխավոր միտքը, այլև կրճատել այն: Պատասխանելով մեր կողմից առաջադրված հարցերին՝ աշակերտները հասկանում են բնագրի հիմնական միտքը և կարողանում են համառոտ վերարտադրել: Կարդացածը համառոտ պատմելու կարողության ձևավորման համար պետք է՝ կարդալ բնագիրը, որոշել թեման, հիմնական մտքի շուրջ դատողություններ անել, առանձնացնել բնագրի տրամաբանական մասերը, վերնագրել, կազմել պլան, պատմել:

Պատմելու տեսակներից է նաև ընտրովի կամ ընտրելով պատմելը: Պատմելու այս ձևը հիմնականում գործադրվում է երկրորդ դասարանից սկսած: Այս դեպքում երեխաները կարդացած ստեղծագործության բովանդակությունը ոչ թե վերարտադրում են, այլ պատմում են կոնկրետ այն հատվածը կամ հատվածները, որոնք անհրաժեշտ է վառ տպավորել աշակերտների հիշողության մեջ: Ընտրովի պատմելուն նպաստում է բնագրի ընտրովի կարդալը, որի արդյունքում աշակերտները կարողանում են ճիշտ կողմնորոշվել և գտնել ու ընթերցել անհրաժեշտ հատվածը: Ընտրովի պատմելու ժամանակ մենք երեխաներին հանձնարարել ենք

պատմել բնագրի այս կամ այն հատվածը՝ որևէ հերոսի կամ որևէ գործողության, երևույթի մասին:

Ընտրովի պատմելն աշակերտներին մղում է մտածելու, վերլուծելու, սեփական կարծիքը ձևավորելու և հայտնելու, պարզ ու հստակ դատողություններ անելու, եզրակացնելու: Ընտրովի պատմելիս սովորողները ցուցաբերում են ակտիվություն, որն էլ նպաստում է նյութի բովանդակության գիտակցաբար յուրացմանը:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաներին դուր է գալիս և մեծ ոգևորություն է պատճառում ստեղծագործաբար պատմելը: Այս ձևով վերարտադրելիս աշակերտներն ստեղծում են նոր գործողություններ, որոնք հաջորդում կամ նախորդում են նկարագրված գործողություններին, այսինքն, երեխաներն ստեղծում կամ շարունակում են պատմությունը՝ մինչև իր տրամաբանական ավարտին հասնելը:

Պատմելու այս ձևը կրտսեր դպրոցական տարիքի երեխաներին աշխուժացնում է և մեծ բավականություն է պատճառում: Այս դեպքում աշակերտներն սկսում են մտածել, երևակայել, դատողություններ կատարել, ստեղծագործել, եզրակացնել:

Որպեսզի մենք կարողանանք պատմելու միջոցով նախապատրաստել գրավոր աշխատանքին, պետք է հետևենք նրանց բառապաշարի հարստացմանը, քայլեր ձեռնարկենք, որ սովորած բառերն ու բառակապակցությունները գործածեն բանավոր և գրավոր խոսքում: Մինչ փոխադրություն գրելը պետք է աշակերտներին ծանոթացնենք տեքստի բառապաշարին, բնագրից դուրս բերենք ուղղագրական արժեք ունեցող բառերը, ինչպես նաև անծանոթ և բացատրության կարիք ունեցող բառերը գրենք գրատախտակին:

Փոխադրության նախապատրաստելիս տեքստը պետք է հատվածաբար պատմել տալ աշակերտներին: Պատմումը պետք է իրականացնել մեթոդական շղթայով.

ա) փոխադրության վերնագրի հաղորդում, դրա քննարկում աշակերտների հետ,

բ) համապատասխան բառապաշարի քննարկում, հենակետային բառերի որոշում,

գ) բնագրի բանավոր շարադրում աշակերտների ակտիվ մասնակցությամբ,

դ) բառային աշխատանք՝ ուղղագրական, բացատրության կարիք ունեցող բառերի դիտարկում,

ե) փոխադրության գրառում,

զ) գրավոր աշխատանքի ինքնաստուգում և հանձնում:

Փոխադրության բնագրի վերարտադրումը փոխադրություն գրելու կարողություն ձևավորելու առաջին քայլն է: Բոլոր դեպքերում պետք է հաշվի առնել ուսուցման մատչելիության, զննականության, պարզից դեպի բարդը գնալու և անհատականության սկզբունքները:

Փոխադրության բնագրի վերարտադրության նպատակը ոչ միայն գիտելիքների հաղորդումն է, անհրաժեշտ կարողություններ և հմտություններ մշակելը, այլև առաջին հերթին աշակերտների հոգեկան գործունեության մեջ որոշակի փոփոխություններ մտցնելը, մտածողության, խոսքի զարգացումը և այլն: Արդյունքում աշակերտները ձեռք են բերում նոր գիտելիքներ, և փոփոխվում են հոգեկան գործունեության ոլորտները:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԳՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

2.1 Փոխադրություն գրելու քայլաշարն ըստ նրանց տեսակների

Փոխադրության բնագրի ընտրությունը կարևոր դեր ունի աշակերտների մոտ հետաքրքրություն առաջացնելու առումով: Այն պետք է կրտսեր դպրոցականի համար լինի պարզ ու մատչելի, ունենա ճանաչողական և դաստիարակչական արժեք, ունենա հետաքրքիր սյուժե:

Տարրական դասարաններում փոխադրության համար առաջադրվում են պատմողական բնույթի բնագրեր՝ պատմվածք, հեքիաթ, առակ:

Փոխադրության բոլոր տեսակների անցկացման համար անհրաժեշտ է բնագրի վերլուծությունը, պատճառահետևանքային կապերի բացահայտումը, դեպքերի տրամաբանական զարգացումը և բովանդակության հատվածաբար ու ամբողջությամբ վերարտադրումը աշակերտների կողմից:

Տարրական դասարաններում կիրառվող փոխադրությունների տեսակների անցկացման նպատակները, պահանջներն ու խնդիրները մենք ներկայացրել ենք նախորդ գլխում: Այժմ փորձենք քննարկել յուրաքանչյուր տեսակի անցկաց ման ձևերն ու եղանակները, կիրառվող քայլաշարը:

Ընդհանրապես բոլոր տեսակի փոխադրություններն անցկացնելուց առաջ ուսուցիչը պետք է փոխադրության բնագրին ծանոթանա հանգամանորեն, որոշի նրա գաղափարն ու ենթատեքստը և կազմակերպի համապատասխան նախապատրաստական զրույց լայն թեմայի շուրջ:

Շատ կարևոր են աշակերտներին տրվող կողմնորոշիչ հարցերը.

ա. տեքստի ընդհանուր բովանդակության բացահայտման նպատակով՝ ինչի՞ մասին է տեքստը, ի՞նչ վերնագիր կտայիք,

բ. տեքստի բովանդակությունն ընկալելու նպատակով՝ ի՞նչ եք կարծում՝ ի՞նչ կլինի հետո, ի՞նչ է տեղի ունեցել, ինչպե՞ս իմացաք, ինչպե՞ս կավարտվի պատմությունը,

գ. բառապաշարի հարստացման նպատակով՝ ինչպե՞ս կարելի է այլ կերպ նկարագրել տեղի ունեցածը:

Փոխադրություններ գրելիս շատ կարևոր է, որ երեխաները հաղորդակցական-խոսակցական մակարդակից անցնեն վերլուծական-ստեղծագործական կառուցողական մակարդակի: Բնագրի, տեքստերի շուրջ հարցեր կազմելիս պետք է նկատի ունենալ հետևյալը.

- հարցի բառապաշարը պետք է աշակերտին ծանոթ լինի և չպարունակի անծանոթ բառեր,
- հարցերը պետք է կազմվեն դիպուկ բառերով, հստակ արտահայտեն հարցնողի միտքը,
- անհրաժեշտ է հարցն այնպես կազմել, որ այն արտահայտի միայն մեկ հարցում և երկարաշունչ չլինի,
- հարցը պետք է լինի բազմապատասխան և աշակերտներին տա ընդարձակ խոսք կառուցելու հնարավորություն, միայն <<այո>> կամ <<ոչ>> ակնկալող հարցերը չեն զարգացնի երեխաների խոսքը,
- չի կարելի տալ բնագրի, տեքստի շուրջ շփոթեցնող և կասկածահարույց հարցեր,
- եթե հարցերը գրվում են գրատախտակին, նպատակահարմար է դրանց կողքին գրել հենակետային՝ բանալի բառերը:

Բնագրին հարազատ կամ մանրամասն փոխադրությունը հանձնարարվում է գրեթե բոլոր դասարաններում: Երկրորդ դասարանից սկսած՝ հանձնարարում ենք աշակերտներին գրել մի քանի նախադասությունից կազմված փոքրիկ բնագրեր՝ աստիճանաբար ծավալն ու բովանդակությունը մեծացնելով ու բարդացնելով:

Բնագրին հարազատ կամ մանրամասն փոխադրությունը՝ որպես գրավորի տեսակ, իր մեջ ներառում է մի շարք փուլեր՝ պայմանավորված մեթոդական շղթայով.

1) բնագրի ընթերցում ուսուցչի կողմից,
2) հարցազրույց ընթերցած բնագրի բովանդակության շուրջ. զրույցի նպատակն է՝ պարզել, թե երեխաներն ամբողջությամբ հասկացե՞լ են բնագրի թեման, հիմնական միտքը ընկալե՞լ են, կռահե՞լ են ենթատեքստը,
3) բնագրի կառուցվածքի դիտարկում, հիմնական մասերի առանձնացում, յուրաքանչյուր մասի վերնագրում և կողմնորոշիչ հարցաշարի կազմում աշակերտների ակտիվ մասնակցությամբ,

4) աշխատանք տանել բնագրի շուրջ, ուղղագրական արժեք ներկայացնող, անծանոթ բառերի ու արտահայտությունների բացատրություն, դրանց գրառում գրատախտակին,
5) գրատախտակին գրված հարցաշարի և հենակետային բառերի միջոցով նյութի պատմում,
6) բնագրի ամբողջական պատմում 1–2 աշակերտի կողմից,
7) բնագրի գրառում,
8) ինքնաստուգում,
9) գրավոր աշխատանքների հանձնում:

Երրորդ և չորրորդ դասարաններում փոխադրության շուրջ տարվող աշխատանքն աստիճանաբար բարդանում է, որովհետև բնագրերի ծավալն ավելի ընդարձակ է: Համեմատաբար շատանում են հերոսները, դեպքերն ու իրադարձությունները, բարդանում է դրանց տրամաբանական հաջորդականությունը, հիմնական միտքն ու գաղափարը:

Երրորդ և չորրորդ դասարաններում փոխադրության մեթոդական շղթան է.

1) բնագրի առաջին ընթերցում,
2) զրույց փոխադրվող բնագրի բովանդակության շուրջ,
3) բնագրի երկրորդ ընթերցում՝ մասնակի մեկնաբանություններով,
4) անծանոթ և ուղղագրական արժեք ունեցող բառերի բացատրություն,
5) հարցաշարի կազմում աշակերտների ակտիվ մասնակցությամբ,
6) բնագրի շարադրում ըստ հարցաշարի,
7) նյութի գրավոր փոխադրում,
8) ինքնաստուգում,
9) գրավորների հանձնում:

Խոսքի զարգացման նպատակով փոխադրություն գրելու ժամանակ նպատակային է կիրառել թեմատիկ նկարներ և հանձնարարել աշակերտներին պատմել այդ նկարների բովանդակությունը: Ընդ որում, պետք է պատմել ոչ միայն մանրամասն, այլև ստեղծագործաբար: Գրատախտակին գրվում են հարցաշարը և հենակետային բառերը:

Ցանկալի է նաև աշակերտներին հանձնարարել նկարել նշված ստեղծագործության բովանդակության դրվագները: Նման առաջադրանքի նպատակն

է զարգացնել աշակերտի երևակայությունը, գույների միջոցով զգացմունքներ արտահայտելը, ինչը կարևոր է խոսքի զարգացման ընթացքում:

Նկարի բովանդակության վերարտադրման գործում աշխատանքներում կարևոր է հարցադրումը: Աշակերտներին տրվում են կողմնորոշիչ հարցեր, հենակետային բառեր, բառակապակցություններ, անցկացվում է զրույց բնագրի բովանդակության շուրջ, որից հետո բնագիրը բաժանվում է հատվածների և վերնագրվում յուրաքանչյուր հատված: Փոխադրություն գրելու ժամանակ մեծ ուշադրություն է դարձվում աշակերտների կազմած նախադասությունների շարադասությանն ու շարադրանքին: Օրինակ՝ հանձնարարում ենք երրորդ դասարանում գրել փոխադրություն <<Աղվեսն ու կճուճը>> վերնագրով:

Անցկացնում ենք նախապատրաստական զրույց բնագրի շուրջ:

1) Ի՞նչ գիտեք աղվեսի մասին: (Աղվեսը խելացի, խորամանկ ու ճարպիկ կենդանի է: Աղվեսը պատկանում է շնազգիների ընտանիքի գիշատիչ կաթնասունների ցեղին):

2) Ինչո՞վ է սնվում աղվեսը: (Սնվում է նապաստակներով, գորտերով, մողեսներով):

Բնագրի ընթերցումից հետո անցկացնում ենք զրույց- քննարկում նյութի բովանդակության վերաբերյալ (ի՞նչ հասկացաք, ինչու՞ էր աղվեսը խուճապի մատնվել): Ընթերցում ենք բնագիրը հատվածաբար և վերլուծում: Բնագրից առանձնացնում ենք ուղղագրական արժեք ունեցող բառերը և բացատրում անհասկանալի բառերը: Յուրաքանչյուր հատվածի շուրջ կատարում ենք նույն աշխատանքը և վերնագրում: Հենակետային բառերն ու բառակապակցությունները գրում ենք գրատախտակին (աղվես, նախաճաշ, թաքցնել, անուշ բուրմունք, խուճապի մատնվել, խեղդվել): Հատվածների վերնագրերն են.

1.Գյուղացու նախաճաշը:

2. Աղվեսի խուճապը:

3. Աղվեսի խեղդվելը:

Աշակերտները պատմում են յուրաքանչյուր վերնագրի բովանդակությունը, պատմում են ամբողջությամբ և փոխադրում տետրերի մեջ: Աշխատանքն ավարտելուց հետո աշակերտները կատարում են ինքնաստուգում և հանձնում են տետրերը:

Համառոտ փոխադրությունը համեմատաբար բարդ է՝ ի տարբերություն փոխադրության մյուս տեսակների, դրա համար էլ կիրառվում է միայն չորրորդ դասարանում: Համառոտ փոխադրությունը պահանջում է տեքստի համառոտ փոխադրում: Այսպիսի գրավոր աշխատանքի նախապատրաստման հիմքում ընկած է տեքստի բովանդակության գլխավոր մտքի բացահայտումը: Օրինակ՝ երեխաներին առաջադրվում է համառոտ փոխադրել «Թիթեռը» վերնագրով բնագիրը: Նախապատրաստական աշխատանքն սկսում ենք հետևյալ քայլաշարով.

1. Ի՞նչ գիտեք թիթեռի մասին: (Թիթեռը ցերեկային թռչող միջատ է: Հայաստանում հանդիպում են Դիլիջանի, Գուգարքի, Գորիսի, Մեղրու անտառներում):
2. Ինչո՞վ է սնվում: (Սնվում է ծաղիկների նեկտարով, մրգերի հյութերով):
3. Ի՞նչ տեսակի թիթեռներ գիտեք:

(Թիթեռները լինում են օգտակար և վնասատու: Օգտակար թիթեռներից հայտնի է թթենու շերամը, որի թելից մետաքս են գործում):

Ուսուցիչը երկու անգամ ընթերցում է: Հարցազրույցի միջոցով աշակերտների ուշադրությունը բևեռում է ընթերցվող բնագրի կարևոր հատվածների վրա: Այնուհետև ակտիվ աշակերտների մասնակցությամբ կազմում և գրատախտակին գրում է հարցաշարը, ինչպես նաև տեքստում հանդիպող անծանոթ բառերն ու բառակապակցությունները:

1. Որտե՞ղ էր շրջում Վարդանը: (շրջել, բանջարանոց):
2. Ի՞նչ նկատեց Վարդանը և ի՞նչ արեց: (թիթեռ, բռնել, ծաղիկ):
3. Ի՞նչ ասաց հայրը Վարդանին, երբ նրա ձեռքին տեսավ թիթեռը: (վնասակար, բանջարանոց, կաղամբ, չենք):
4. Ինչու՞ է վնասակար թիթեռը: Ինչպե՞ս է հայրը դա բացատրում Վարդանին: (թրթուր, տերև, որդ, ոչնչացնում):
5. Ի՞նչ իմացավ Վարդանը: (կերպարանափոխվել, թրթուր, հարսնյակ, թիթեռ, կարճ կյանք):

Աշակերտները հատվածաբար անդրադառնում են բնագրի բովանդակությանը՝ պատմելով այն: Հետո սկսում են աշխատել: Ավարտելուց հետո ինքնաստուգում են կատարում և աշխատանքը հանձնում ուսուցչուհուն:

Դիտարկենք համառոտ փոխադրության իրականացման մեթոդական շղթան.

ա) բնագրի առաջին ընթերցում (2 անգամ),

բ) հարցազրույցի միջոցով ստեղծագործության հիմնական դեպքերի դիտարկում,

գ) փոխադրվող նյութի բառապաշարի ուսումնասիրում,

դ) հարցաշարի կազմում աշակերտների ակտիվ մասնակցությամբ,

ե) 1- 2 դրվագի համառոտ պատմում,

զ) հարցաշարի կետերին համապատասխան՝ ողջ բնագրի համառոտ պատմում,

է) բնագրի ինքնուրույն համառոտ պատմում և գրառում,

ը) ինքնաստուգում,

թ) գրավորների հանձնում:

Համառոտ փոխադրելիս գեղարվեստական բնագիրը աղքատանում է՝ վերածվելով պարզապես փաստերի թվարկության: Այդ երևույթը կանխելու համար աշակերտներին պիտի սովորեցնել ոչ թե բաց թողնել պատահական, իրենց կարծիքով ավելորդ հատվածները, այլ ընդարձակ արտահայտված հեղինակային միտքը հակիրճ ներկայացնել:

Ընտրովի փոխադրության ուսուցման մեթոդիկան նման է ընդարձակ և համառոտ փոխադրություններին, սակայն ի տարբերություն փոխադրության մյուս տեսակների, այս տեսակը գրելիս երեխաները վերարտադրում են ստեղծագործության միայն մեկ հատվածը, ընտրությունը կատարում է կա՛մ աշակերտը, կա՛մ ուսուցիչն է հանձնարարում ունկնդրել և վերարտադրել միայն իր հանձնարարած հատվածները ոչ միայն ընդարձակ, այլև ստեղծագործաբար, վերլուծելով, դատողություններ անելով:

Ընտրովի փոխադրությունը կապող օղակ է փոխադրության և շարադրության միջև: Այն իրականացվում է միայն չորրորդ դասարանում, երբ աշակերտներն ունեն բնագրի շուրջ աշխատելու որոշակի կարողություններ, կարող են բացահայտել թեման, կռահել հիմնական միտքը, դատողություններ անել, հասկանալ ենթատեքստը և այլն:

Նկատի ունենալով կրտսեր դպրոցականի մտածողության ինքնատիպությունը՝ խորհուրդ է տրվում փոխադրությունն այնպես անցկացնել, որ այն ընկալվի ոչ միայն լսողական, այլև տեսողական ճանապարհով: Այդ նպատակով առաջարկվում է բնագիրը բաժանել բոլոր երեխաներին կամ այն ընտրել այնպիսի գրքից, որն ունեն բոլոր երեխաները, այդ թվում՝ դասագրքից:

Աշխատանքի ընթացքում միևնույն բնագրի վրա երեխաներն աշխատում են ինքնուրույն, գործողությունների հաջորդականությունը հիշելու համար նշումներ են անում, ընտրում են հեղինակային բառերը և այլն: Այսպիսի աշխատանքը հնարավորություն է տալիս ինքնուրույնաբար ընկալելու բնագիրը, իմաստավորելու այն՝ առաջին տպավորությամբ դատողություններ անելու, այդ դեպքում երեխաները ձեռք կբերեն ստեղծագործությունն ինքնուրույն, ազատ վերլուծելու, հակադրելու, համադրելու կարողություններ: Հարկավոր է նաև բնագիրը դիտարկելու պահին երեխաների ուշադրությունը հրավիրել հեղինակի մտահղացումների, ստեղծագործության կառուցվածքի, լեզվաոճական առանձնահատկությունների վրա:

Ընտրովի փոխադրությունը ներառում է հետևյալ քայլերը.

ա) բնագրի ընթերցում ուսուցչի կողմից կամ ընթերցում են աշակերտները,

բ) բովանդակության վերլուծություն,

գ) փոխադրության հատվածի ընտրություն,

դ) ընտրված հատվածի վերլուծություն, հենակետային բառերի ընտրություն,

ե) նյութի բովանդակության վերարտադրում հենակետային բառերի օգնությամբ,

զ) ընտրված հատվածի վերնագրում,

է) փոխադրված նյութի գրառում,

ը) ինքնաստուգում,

թ) գրավորների հանձնում:

Ստեղծագործական փոխադրության դեպքում բնագիրը վերարտադրվում է գործող անձերից մեկի անունից, ինչպես նաև պատմողի դեմքի փոփոխումով: Բնագրի վերնագրի տակ պետք է նշել տեսակը: Ուսուցիչը կարդում է փոխադրության նյութի նախատեսված հատվածը, ապա հանձնարարում է, որ աշակերտներն ստեղծագործեն ու հորինեն շարունակություն և ավարտ: Լավ կլինի, որ ուսուցիչը չկասեցնի աշակերտի երևակայության թռիչքը, չվախենա առանձին աշակերտների՝ առաջին հայացքից անհեթեթ թվացող հորինվածքից: Նախ անհրաժեշտ է, որ երեխաներն իրենք որոշեն, թե իրենց կարդացած կամ լսած բնագրում նկարագրված դեպքերից որոնք կարող են կատարվել իրականում, որոնք են անիրական, մտացածին և այլն: Փոխադրության շուրջ տարվող աշխատանքների շրջանում պիտի կարևորել հերոսների այն արարքները, որոնց

շուրջ զարգանում են հեքիաթի դեպքերը: Դրանց միջոցով են որոշվում գլխավոր հերոսի արարքների դրդապատճառները, հեքիաթի տրամաբանությունն ու գլխավոր գաղափարը: Այսպիսի վերլուծության արդյունքը պետք է դառնա հեղինակի դիրքորոշման ըմբռնումն ու ընթերցողի վերաբերմունքի ձևավորումը ընթերցածի բովանդակության նկատմամբ: Հիմք ընդունելով բովանդակային բաղադրիչները՝ անհրաժեշտ է նախ երեխաների ուշադրությունը հրավիրել որոշակի բառերի ու արտահայտությունների վրա, քանի որ բառերի միջոցով է առաջին հերթին հնարավոր որոշել հերոսի հոգեվիճակը, նրա արարքների դրդապատճառները, հերոսի ինչպիսին լինելը, հեղինակի վերաբերմունքը նրա նկատմամբ և այլն: Օրինակ՝ <<Երկու ուլիկները>> ընթերցելիս կարելի է տալ հետևյալ հարցը՝ ինչու՞ ուլիկները չէին կարող անցնել կամրջով: Աշակերտներին օգնելու համար կարելի է տալ պատասխանների խումբ՝ թողնելով, որ իրենք ընտրեն իրենց համար ընդունելի պատասխանը: Հաջորդ խնդիրը, որ պետք է կարևորվի ստեղծագործական փոխադրության տեքստի վերարտադրման ժամանակ, նրա ժանրային առանձնահատկությունների շուրջ տարվող աշխատանքն է: Երեխաների ուշադրությունը պետք է հրավիրել հեքիաթի կառուցվածքային առանձնահատկությունների, մասնավորապես հեքիաթի սկզբի և ավարտի վրա: Երեխաների հետ բնագրի ժանրային առանձնահատկությունների մասին խոսելիս պետք է նրանց բացատրել այն հանգամանքը, որ հեքիաթում մի խումբ կերպարներ գործում են ինչ-որ արարքներ՝ իրենց նպատակներն իրականացնելու համար: Այդ կերպարներն իրար օգնում կամ խանգարում են: Այսպիսով երեխան ըմբռնում է չարի և բարու գործոնը ոչ միայն հեքիաթում, այլև կյանքում: Հեքիաթի վերջում բարու հաղթանակը կոգևորի նրան՝ կատարելու բարի գործեր և հասկանալու, որ հաղթանակի բերկրանքը հեշտությամբ չի տրվում: Այսինքն հեքիաթը պետք է մեկնաբանվի, իմաստավորվի իրենց իսկ կյանքի օրինակով:

3-4-րդ դասարաններում առանձնահատուկ տեղ պետք է տալ ստեղծագործական փոխադրություններին, որոնք ենթադրում են կրտսեր դպրոցականի հաղորդակցական խոսքային կարողությունների ձևավորվածության առավել բարձր մակարդակ: Ստեղծագործական փոխադրություններն առանձնանում են գրավոր աշխատանքի մյուս տեսակներից և՛ հետապնդած նպատակներով, և՛ անցկացման մեթոդներով: Ստեղծագործական

փոխադրություններն առաջին հերթին բնութագրվում են աշակերտների ասելիքի հուզական ուղղվածությամբ և տրված տեքստի որոշակի մշակումով [7, 45]:

Փոխադրություն գրելու աշխատանքի հաջորդ քայլում կատարվում է փոխադրության գրառում՝ նյութի շարադրում, որը ենթադրում է խոսքային գործունեության տեսակների՝ մտածելու և մտածածն արտահայտելու շարադրում: Այս փուլը ենթադրում է փոխադրություն գրելու կարողության ձևավորում:

Այսպիսով՝ փոխադրության տեքստի վերարտադրումը սովորաբար ուղեկցվում է հետևյալ քայլերով.

1. ուսուցչի կողմից բնագրի ընթերցում՝ աշակերտների՝ տեքստի բովանդակության ամբողջական ընկալման նպատակով,
2. բնագրի երևակայական կողմի բացահայտում, եթե առկա է տեքստում,
3. բնագրի բարոյախրատական իմաստի վերհանում,
4. բնագրում կիրառված բառերի վերլուծություն:

Սա նշանակում է, որ փոխադրության բնագրի ընկալումը պետք է իրականացվի բացատրական ընթերցանության բոլոր բաղադրատարրերի կիրառմամբ:

Այսպիսով՝ փոխադրության բոլոր փուլերում գրավոր խոսքն առաջանում է մտքերի փոխանցման կամ կայունացման ոչ անմիջական հաղորդակցման պահանջից և անմիջապես հիմնված է բանավոր կամ խոսակցական լեզվի վրա: Այն ուղղակի առաջին փուլի բանավոր խոսքի վերարտադրումն է գրի միջոցով:

Այսպիսով՝ փոխադրություն գրելու աշխատանքի մեթոդիկայի ճիշտ ընտրությունը նպաստում է կապակցված խոսքի զարգացմանը: Կապակցված խոսքի ստեղծումը խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքների բարձրակետն է, որովհետև այդ ուղղությամբ տարվող աշխատանքների վերջնական նպատակը աշակերտների մեջ կապակցված խոսք ստեղծելու կարողության ձևավորումն է: Ուսումնասիրվող յուրաքանչյուր նյութ աշակերտների կողմից պետք է ամբողջությամբ վերարտադրվի, որպեսզի նրանք սովորեն նյութի հաջորդականությունը պահպանել, հետևել դեպքերի տրամաբանական զարգացմանը, կարողանան կապակցված ու ավարտուն խոսք կառուցել:

2.2. Փոխադրության ստուգման չափանիշները

Աշակերտի գրավոր աշխատանքի գնահատումը շատ պատասխանատու և նուրբ գործ է: Գնահատման հիմնական նպատակը սովորողի գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակի, անձնային որակների և դրա հիման վրա գրված գրավոր աշխատանքի որակի վերահսկումն է: Գնահատումը նպաստում է նաև սովորողի ինքնահաստատմանը և ինքնազարգացմանը: Այն պետք է լինի արդար, հուսալի, անկողմնակալ, հավաստի, հիմնավորված: Հետևաբար, գնահատականը դաստիարակչական կարևոր գործոն է, և այն պետք է միանգամայն տրամաբանված, ճիշտ ու մտածված ձևով նշանակել: Ուստի գրավոր աշխատանքի իրական պատկերը տեսնելու և հասկանալու համար անհրաժեշտ է կիրառել և համադրել ստուգման տարբեր ձևեր:

Գրավոր աշխատանքի ստուգման ժամանակ հարկ է լինում հաշվել գրավոր աշխատանքում աշակերտի թույլ տված սխալները: Նախորդ տարիներին փոխադրության համար երկու գնահատական էր դրվում՝ կոտորակի ձևով ցույց տալով սխալների ընդհանուր թիվը՝ համարիչը մտքի շարադրանքն է նշում, ցույց տալով, թե աշակերտը կարողացել է ճշտորեն փոխադրել տեքստի բովանդակությունը, պահպանելով դեպքերի ճիշտ հաջորդականությունը, իսկ հայտարարում՝ ուղղագրական, քերականական, կետադրական սխալների քանակը: Այժմ տարրական դասարաններում միանգամայն ավելորդ են այդ նշումները: Աշակերտը պետք է գիտենա, որ իր գրած փոխադրությունը գնահատվում է ամբողջությամբ վերցրած՝ հաշվի առնելով հարուստ բառապաշարը, նախադասությունների ոճական ու քերականական կառուցվածքը, օգտագործված պատկերավոր արտահայտությունները:

Յուրաքանչյուր գրավոր աշխատանք ստուգելուց ու գնահատելուց հետո ուսուցիչը պետք է իր մոտ գրանցի բոլոր սխալները և պարզի, թե քանի աշակերտ է միևնույն սխալը կատարել: Նման հաշվառումը ուսուցչին հնարավորություն կտա գտնելու ընդհանուր և մասնակի սխալները և ըստ այդմ էլ պլանավորել իր հետագա անելիքները: Գրավոր աշխատանքների ստուգման

ժամանակ չի կարելի գրավոր դիտողություններ անել, ցուցումներ տալ կամ էլ գովաբանել: Այդ մասին ու սուցիչը նշումներ պետք է անի իր մոտ՝ գրավորի վերլուծման դասին խոսելու համար:

Քանի դեռ աշակերտների մոտ թարմ են փոխադրությունից ստացած տպավորությունները, պետք է կազմակերպել ստուգման արդյունքների քննարկում: Օրինակ՝ փոխադրության ստուգման ժամանակ աշակերտի մոտ նկատվում է.

1) Միևնույն բառի մեջ թույլ տրված ուղղագրական տարբեր կանոններին վերաբերող մեկից ավելի սխալներ, դրանք համարվում են առանձին սխալներ:
2) Միևնույն բառի կամ արմատի սխալ գրությունը, դրանցով կազմված տարբեր բառերում, համարվում է մեկ սխալ:
3) Տարբեր բառերի մեջ ուղղագրական միևնույն կանոններին վերաբերող ամեն մի խախտում համարվում է առանձին սխալ:
4) Տողադարձի միևնույն կանոնին վերաբերող սխալները պետք է համարել մեկ կետադրական սխալ:
5) Կետադրական միևնույն նշանի (ստորակետ, բութ, միջակետ և այլն) անհարկի գործածության մեկից ավելի դեպքերը համարել տարբեր սխալներ:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել, թե աշակերտը փոխադրվելիք նյութը ինչպես է գրել: Գրել է առանց ջնջումների, անթերի, համապատասխան ծավալով, բովանդակությունը համապատասխանում է թեմային, շարադրված է գրագետ, պահպանված են դեպքերի ճիշտ հաջորդականությունն ու տրամաբանությունը, հարուստ է բառապաշարը: Սակայն կան աշակերտներ, որոնք փոխադրել են տեքստի բովանդակությունը, բայց դեպքերի հաջորդականության մեջ թույլ են տվել շեղումներ, բառապաշարը աղքատիկ է, կան խոսքային անճշտություններ, կամ առկա են բազմաթիվ ուղղագրական, կետադրական, ոճական սխալներ:

Աշակերտների գրավոր աշխատանքներում տեղ գտած սխալների վերացման ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետության համար կարևոր նշանակություն ունի այդ սխալների գիտական դասումը:

Փոխադրության ստուգման ժամանակ պետք է ուշադրություն դարձնել հետևյալ հարցերի վրա.

ա) փոխադրությունն արդյոք համապատասխանո՞ւմ է առաջադրված նյութի բովանդակությանը,

բ) բովանդակությունը լրի՞վ է վերարտադրված, թե՞ կան բացթողումներ,

գ) ինչպե՞ս է կատարված առանձին բառերի, արտահայտությունների ու լեզվական այլ ձևերի ընտրությունն ու օգտագործումը:

Փոխադրությունը ստուգելիս առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել նախադասության կառուցվածքի և բառերի ոչ տեղին օգտագործման վերաբերյալ թույլ տված սխալների վերացման ուղղությամբ: Դրանք փոխադրություններում ամենից շատ հանդիպող սխալներն են:

Գրավոր աշխատանքը պետք է անցկացնել երկրորդ կամ երրորդ դասաժամին: Ո՛չ առաջին և ո՛չ էլ վերջին ժամերին գրավոր աշխատանք տալը հարմար չէ, որովհետև ցրվածության, հոգնածության պատճառով աշակերտները չեն կենտրոնանում, այնինչ փոխադրություն գրելը երեխայից մեծ ուշադրություն է պահանջում: Օրինակ՝ կանխատեսումների վրա հիմնված փոխադրությունների նա խապատրաստումն ու անցկացումը մեծ ջանքեր է պահանջում թե՛ ուսուցչից, թե՛ աշակերտներից: Չորրորդ դասարանում անցկացրի փոխադրություն <<Կանխագու շակման մեթոդով>>: Փոխադրության վերնագիրն էր <<Անտառի աստղերը>>:

Աշխատանք տարվեց տեքստի վերնագրի շուրջ: Որոշակի տեղեկատվություն ստացան տեքստի թեմայի, ստեղծագործության ժանրի մասին: Ապա դիմեցինք աշակերտներին.

- Տեքստը, որի շուրջ փոխադրություն եք գրելու, վերնագրված է <<Անտառի աստղերը>>, վերնագիրը գրված է գրատախտակին: Ի՞նչ եք կարծում՝ ինչի՞ մասին է այն, ու՞մ մասին է պատմվում, ի՞նչ դեպքեր կարող են պատահել:

Յուրաքանչյուր աշակերտ ներկայացրեց իր կանխատեսումը, որ բնագիրը կարող է վերաբերել անտառին, անտառում ապրող կենդանիներին, ինչու՞ չէ, նաև բույսերին: Ընթերցվում է բնագիրը, և աշակերտները համեմատում են իրենց կանխատեսումները տեքստի հետ: Լսելով աշակերտների պատասխանը՝ համոզվում ենք, որ նրանք ընկալել են նյութը և սկսում են աշխատանքը:

Աշխատանքը գնահատելիս կարևորում ենք կատարման ընթացքը, քննարկման ժամանակ աշակերտի դրսևորած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները: Երբ մատնանշվում են թեկուզ աննշան թերություններ, որոնք կարելի է վերացնել, բացթողումները, որոնց ուղղությամբ անհրաժեշտ հետևողական աշխատանք է տարվում, աշակերտները հասկանում են իրենց գնահատականի իմաստը: Երբ աշխատանքի որակը բարձր է, աշխատանքը գնահատվում է գերազանց: Աշխատանքը գնահատվում է լավ, որովհետև կան վրիպումներ: Աշխատանքը գնահատվում է բավարար, երբ աշխատանքը համապատասխանում է չափորոշչին, բայց կան կոպիտ ուղղագրական սխալներ, թերություններ, բացթողումներ:

Այսպիսով, հստակ ներկայացվում են աշխատանքից ակնկալվող արդյունքները, որոնք արդարացի են ու իրատեսական: Փոխադրության ստուգման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նաև հետևյալ հանգամանքները.

1) նշել, թե աշակերտի աշխատանքն ինչպես է գնահատվելու,

2) ընտրել հստակ չափանիշներ, որոնց շնորհիվ գնահատելիս հնարավոր կլինի խուսափել չհիմնավորված եզրակացություններից կամ սուբյեկտիվ դատողություններից,

3) հստակ ներկայացնել աշխատանքից ակնկալվող արդյունքները, որոնք իրատեսական և արդարացի կհամարվեն:

Այսպիսով, գնահատումը շարունակական գործընթաց է, որը փոխադարձ կապ է ապահովում ուսուցիչների և աշակերտների միջև [11, 24]:

2. 3 Փոխադրություն գրելու կարողության ձևավորման մեր փորձից

Դասի պլան

Ամսաթիվ՝

Դասարան՝ 4-րդ (չորրորդ)

Առարկա՝ Մայրենի

Դասի տեսակը՝ Գրավոր աշխատանք (փոխադրություն)

Թեմա՝ <<Սիրո գաղտնիքը>>

Դասի նպատակներն ու խնդիրները՝

- Կապակցված խոսք կառուցելու կարողության ձևավորում:
- Ձևավորել աշակերտների՝ ընկալման և վերարտադրության համար անհրաժեշտ խոսքային – հաղորդակցական կարողություններ:
- Բնագրի բովանդակության վերարտադրում հասկանալով:
- Աշակերտների բառապաշարի հարստացում նոր բառերով ու բառակապակցություններով:
- Որոշակի խոսքային և ուղղագրական սխալների կանխում:

Ձևական պարագաներ՝ - նկարներ (գարնան՝ վաղ գարուն, ուշ գարուն, ձմեռ):

Դասը վարել << ԽԻԿ>> համակարգով

Դասի ընթացքը՝ - Կազմակերպական պահ

Խթանման փուլում անցկացրինք նախապատրաստական զրույց փոխադրության տեքստի շարադրմանը ներկայացվող պահանջների մասին: Քանի որ բնագիրը տարվա եղանակների մասին է, ցուցադրեցինք ձմեռը, վաղ գարունը և ուշ գարունը պատկերող նկարներ, ապա անցկացրինք զրույց տարվա եղանակների հերթագայության վերաբերյալ, հատկապես՝ ձմռան և գարնան:

Զրույցը հետևյալ հարցերի շրջանակում էր.

1. Տարին քանի՞ եղանակ ունի:
2. Որո՞նք են ձմռան և գարնան ամիսները:
3 .Ի՞նչ փոփոխություններ են կատարվում բնության մեջ և մարդկանց կյանքում երկու եղանակների փոխհաջորդման ընթացքում:

4. Ի՞նչ տարբերություն կա վաղ գարնան և ուշ գարնան միջև. ներկայացրե՛ք բնության փոփոխությունները և ձեր տրամադրությունն այդ ընթացքում:

Պատասխաններից զգացվեց, որ աշակերտներին ավելի շատ դուր է գալիս գարունը, քանի որ օրերը տաքանում են, բնությունը կանաչով ու ծաղիկներով է պատվում, իրենք դրսում խաղալու համար ավելի շատ հնարավորություն են ունենում:

Իմաստի ընկալման փուլում աշակերտների ուշադրությունը հրավիրեցինք վերնագրին՝ <<Սիրո գաղտնիքը>>, փորձեցինք կանխագուշակումների մեթոդով պարզել, թե ինչ են մտածում, ինչի մասին կլինի բնագիրը: Պատասխանները հիմնականում մայրիկի կամ մյուս հարազատների ու ընկերների հանդեպ ունեցած սիրուն էին վերաբերում, թեև կային աշակերտներ, ովքեր, ելնելով խթանման փուլում վարած զրույցից, ենթադրում էին, որ գարնան մասին կլինի:

Մենք մեկ անգամ կարդացինք բնագիրը՝ բովանդակությունն ամբողջությամբ ընկալելու նպատակով, անցկացրինք մտքերի փոխանակություն ձմռան և գարնան հանդեպ ունեցած իրենց վերաբերմունքի մասին, աշակերտները մեկնաբանեցին **սիրո գաղտնիքը** բառակապակցության իմաստը իրենց ընկալումով:

Երկրորդ անգամ ընթերցեցինք բնագիրը հատվածաբար՝ պահանջելով, որ աշակերտները վերնագրեն յուրաքանչյուր հատվածը: Արդյունքում ստեղծվեց հետևյալ հարցաշարը.

1.Ձմռան և գարնան հանդիպումը:

2.Տխուր ձմեռը:

3.Գարնան և ձմռան զրույցը:

4.Ձմռան մտահոգությունը:

5.Գարնան մեկնաբանությունը:

6. Ձմռան ժպիտը և հրաժեշտը բնությանը:

Հատվածաբար ընթերցելու ժամանակ բացատրեցինք անհասկանալի բառերն ու արտահայտությունները, գրատախտակին գրեցինք ուղղագրական արժեք ունեցող և հենակետային բառերը. լաց լինել, արցունքները սառչել այտերի վրա, նեղություն տալ, հուզմունքից շիկնել, ոչ ոք, բուք, թռչուն, աշխարհ, գլգլան:

Հարցաշարի բոլոր հարցերին պատասխանեցին աշակերտները՝ օգտագործելով գրատախտակին գրված բառերը: Ապա երկու աշակերտ, իրար շարունակելով, պատմեցին բնագրի բովանդակությունը, և աշակերտները փոխադրությունը գրեցին տետրերում:

Կշռադատման փուլում աշակերտների կողմից կատարվեց ինքնաստուգում և տետրերի հանձնում:

Գրավոր աշխատանքների ստուգումից պարզվեց, որ աշակերտները լավ էին հասկացել բնագրի բովանդակությունը, ենթատեքստը, այն է՝ յուրաքանչյուր եղանակ իր ժամանակին գալիս և հեռանում է՝ տեղը զիջելով հաջորդին: Աշակերտները պահպանել էին մտքերի հաջորդականությունը, շարադրանքի մեջ օգտագործել էին երկխոսություններ, հիմնականում անսխալ էին կետադրել, օգտագործել էին հենակետային բառերը: Կային աշակերտներ, ովքեր թույլ էին տվել ուղղագրական սխալներ, որոշ նախադասությունների մեջ նկատվում էր սխալ շարադասություն:

Փոխադրության արդյունքները հետևյալն են՝

Գերազանց՝ 70 %

Լավ՝ 20 %

Բավարար՝ 10 %

Անբավարար գնահատական չենք ունեցել:


70
60
50
40
30
20
10
0

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Ամսաթիվ՝

Դասարան՝ 4-րդ (չորրորդ)

Առարկա՝ Մայրենի

Դասի տեսակը՝ Գրավոր աշխատանք (համառոտ փոխադրություն)

Թեմա՝ <<Ընձուղտը հիվանդացել է>>

Դասի նպատակներն ու խնդիրները՝

-Կապակցված խոսք կառուցելու կարողության ձևավորում:

- Ձևավորել աշակերտների՝ ընկալման և վերարտադրության համար խոսքային անհրաժեշտ կարողություններ:

- Բնագրի բովանդակության համառոտ վերարտադրություն:

- Հարստացնել աշակերտների բառապաշարը նոր բառերով ու բառակապակցություններով:

- Ճանաչողական գիտելիքների ձևավորում ընձուղտի մասին:

Զննական պարագաներ՝ նկարներ (ընձուղտի, կենդանաբանական այգու):

Դասը վարել <<ԽԻԿ>> համակարգով:

Դասի ընթացքը՝ - Կազմակերպական պահ

Խթանման փուլում աշակերտներին ներկայացրինք համառոտ փոխադրություն գրելու պահանջները:

Անցկացրինք նախապատրաստական զրույց կենդանաբանական այգու, այնտեղ բնակվող կենդանիների, հատկապես՝ ընձուղտի մասին, ինչպիսի՞ն է նրա տեսքը, ո՞րն է նրա հայրենիքը, ի՞նչ պայմաններում է ապրում, ի՞նչ գիտեն <<Կենդանիների աշխարհում>> հաղորդաշարից:

Սովորողները տեղեկություններ հաղորդեցին ընձուղտի մասին առ այն , որ ընձուղտը երկարավիզ է, ունի մարմնի բաց գույն, սև աչքերը շրջապատված են խիտ թարթիչներով, ականջները կարճ են: Ունի լավ տեսողություն, լսողություն և հոտառություն: Զգալի էր, որ աշակերտները սիրում են ընձուղտ կենդանուն, քանի որ նրանք ուրախ ու ժպիտով էին խոսում ընձուղտի մասին:

Իմաստի ընկալման փուլում կարդացինք բնագիրը՝ բովանդակությունն ամբողջությամբ ընկալելու նպատակով:

Կատարեցինք մտքերի փոխանակություն կենդանիներին, բույսերին իրենց հայրենիքից, կլիմայից կտրելու, մեկ այլ միջավայրի վարժեցնելու, այդ ընթացքում դժվարություններ հաղթահարելու մասին: Աշակերտները գնահատեցին երեխաների վերաբերմունքը հիվանդ ընձուղտի հանդեպ և իրենց պատրաստակամությունը հայտնեցին կենդանիներին օգնելու առումով:

Երկրորդ անգամ բնագիրը կարդացինք հատվածաբար, դուրս գրեցինք յուրաքանչյուր հատվածի անհասկանալի, ուղղագրական արժեք ունեցող և հենակետային բառերը, ապա աշակերտները վերնագրեցին յուրաքանչյուր հատվածը: Գրատախտակին գրվեցին հետևյալ բառերն ու բառակապակցությունները՝ ընձուղտ, Աֆրիկա, օգնել, տաքուկ, չէր, խղճալ, վզպատ, երբեք, բրդյա, փաթեթ, չէին, փոշտալ: Բացատրվեցին անհասկանալի բառերը՝ վզպատ - վզնոց, փողպատ, պարանոց - վիզ, փոշտալ - վռնչալ, փռնչալ:

Համառոտ փոխադրության համար ունեցանք հետևյալ վերնագրերը:

1. Ընձուղտը կենդանաբանական այգում:
2. Ընձուղտի հիվանդության պատճառը:
3. Երեխաների այցելությունը և օգնությունը ընձուղտին:

Աշակերտները պատմեցին յուրաքանչյուր վերնագրի բովանդակությունը՝ օգտագործելով առանձնացված բառերը: Ապա երկու աշակերտ համառոտ պատմեցին բնագրի բովանդակությունը՝ խուսափելով ներկայացնել մանրամասները:

Կատարվեց փոխադրության գրառում տետրերում:

Կշռադատման փուլում աշակերտները կատարեցին գրավոր աշխատանքների ինքնաստուգում և հանձնեցին տետրերը:

Գրավորների արդյունքները գոհացուցիչ էին. նախ այն առումով, որ աշակերտները հասկացել էին, թե որքան կարևոր է օգնության ձեռք մեկնել օգնության կարիք ունեցողներին, օգնել կենդանիներին, ապա կարևոր է այն, որ աշակերտները ճիշտ էին հասկացել համառոտ փոխադրություն գրելու պահանջները և կարողացել էին գլխավորը տարբերակել երկրորդականից: Որոշ աշխատանքների մեջ նկատվում էին թերություններ՝ ուղղագրական սխալներ, ոչ ճիշտ մտքերի ձևակերպում:

Փոխադրության արդյունքները հետևյալն են՝

Գերազանց՝ 65 %

Լավ՝ 20 %

Բավարար՝ 15 %

Անբավարար գնահատական չենք ունեցել:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր ուսումնասիրած մասնագիտական գրականության, վարած դասերի և փորձարարական աշխատանքի արդյունքում եկել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Առաջինից չորրորդ դասարաններում կրտսեր դպրոցականների՝ փոխադրություն հյուսելու կարողության ձևավորմանը միտված աշխատանքները նպաստում են սովորողների բանավոր ու գրավոր գրագետ խոսք կառուցելու հմտության զարգացմանը: Փոխադրություն գրելու գործընթացում զարգանում են սովորողների պատկերավոր և քննադատական մտածողության, երևակայության, ինքնուրույն ստեղծագործական և մտավոր գործունեություն ծավալելու կարողությունները:
2. Փոխադրության համար նախատեսված ստեղծագործությունների բովանդակությունը պետք է համապատասխանի կրտսեր դպրոցականների տարիքային և ճանաչողական հետաքրքրություններին, ունենա պարզ կառուցվածք, դեպքերի տրամաբանական ըմբռնելի հաջորդականություն և դաստիարակչական արժեք: Սովորողների խոսքի զարգացմանը նպաստում են մասնավորապես փոխադրության հետևյալ տեսակները՝ մանրամասն, համառոտ, ընտրովի, ստեղծագործաբար, հատկապես, երբ դասի ընթացքում իրականացվում է համագործակցային աշխատանք և կիրառվում են այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝ «Մտագրոհ», «Զրույց»:
3. Կրտսեր դպրոցականների խոսքի զարգացմանը նպաստում են նաև փոխադրվող նյութի գաղափարի և կատարվող դեպքերի շուրջ ծավալվող վերլուծությունը, անհրաժեշտ բառապաշարի առանձնացումը և օգտագործումը գրավոր կամ բանավոր փոխադրելու ընթացքում:
4. Մեր կողմից մշակվախ և փորձարկված մեթոդական քայլաշարը նպաստում է կրտսեր դպրոցականների բառապաշարի հարստացմանը և կապակցված խոսքի զարգացմանը:
5. Այս գործընթացում կարևորվում են նկարների շուրջ պատմությունների հյուսումը և պլանի կազմումը:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասատրյան Զ., Տարրական կրթության մանկավարժություն, Եր., 2017թ., 160 էջ:
2. Ասատրյան Լ. և ուրիշներ, Մանկավարժություն/ ուսումնամեթոդական ձեռնարկ բուհերի համար/, Երևան, Արտագերս, 2017թ., 358 էջ:
3. Գյուլամիրյան Զ.,Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Եր., 2015թ., 316 էջ:
4. Գյուլամիրյան Զ., Արտագրությունների, թելադրությունների, շարադրությունների, փոխադրությունների ձեռնարկ, Երևան, Զանգակ- 97, 2015թ. 184 էջ:
5. Գյուլբուդաղյան Ս., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1987թ,329 էջ:
6. Էդիլյան Գ., Հայոց լեզվի մեթոդիկա, Թիֆլիս, 1923թ,- 296էջ:
7. Թորոսյան Կ. և ուրիշներ, <<Մայրենի 2 -4>>: Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2007թ., 88 էջ:
8. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Մուսայելյան Ս., Միավորային գնահատման հարցարանների շտեմարան, արտագրություն, թելադրություն, փոխադրություն, շարադրություն, Հրազդան, Նարեկ հրատարակչություն, 2013թ., 224 էջ:
9 Ղարիբյան Ա., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1958թ, -537 էջ:
10. Միքայելյան Օ. Ս., Միքայելյան Ս. Օ., Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության բարելավման խթան: Ուսուցչի ձեռնարկ, ՀՀ ԿԳ Կրթության ազգային ինստիտուտ, Երևան, 2010թ.- 80 էջ:
11. Մանուկյան Ա., Խոսքի զարգացման մեթոդիկա, Երևան, Լույս, 1976թ., 248 էջ:
12. Նազարյան Ռ., Ալեքսանյան Թ., փոխադրության նյութերի ժողովածու, Եր., Զանգակ – 97, 2000թ., 480 էջ:
13.Նախաշավիղ, գիտամեթոդական հանդես, Երևան, 2009, 3-4, 128 էջ:
14. Շահբազյան Տ., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1958թ,-368 էջ:
15. Սարգսյան Վ., Այբբենարան, հանրակրթական դպրոցի առաջին դասարան, Եր., Մանմար, 2015թ.–156 էջ:
16. Վիրաբյան Ն., Մարգարյան Լ., Փոխադրությունների ժողովածու, Եր., Մանմար,

2010թ., 240 էջ:

17. Տեր - Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980թ., 564 էջ:

18. Տեր – Գրիգորյան Ա., Խոսքի զարգացման մեթոդիկա, Երևան, 1976թ., 276 էջ:

19. Б.Ц.Науденов,Л. Ю. Коренюк, Методика вырази